# ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
## կնքված պայմանագրում կատարված փոփոխությունների մասին

«ԵՐԵՎԱՆԻ ԱՎՏՈԲՈՒՍ» ՓԲԸ-ն ստորև ներկայացնում է իր կարիքների համար սեղմված բնական գազի ձեռքբերման նպատակով կազմակերպված ԵԱ-ՀՄԱՊՁԲ-22/76 ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում 2023 թվականի փետրվարի 3-ին կնքված N ԵԱ-ՀՄԱՊՁԲ-22/76-3 ծածկագրով պայմանագրում 2023 թվականի դեկտեմբերի 29-ին կատարված փոփոխությունների վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը և կատարված փոփոխությունը պարունակող՝ երկկողմ հաստատված փաստաթղթի պատճենը:

**Փոփոխության առաջացման պատճառ.** «ԵՐԵՎԱՆԻ ԱՎՏՈԲՈՒՍ» ՓԲԸ-ի և «ԷԼԻՍՏԻԼ» ՍՊԸ-ի միջև 2023 թվականի փետրվարի 3-ին կնքված N ԵԱ-ՀՄԱՊՁԲ-22/76-3 պայմանագրի շրջանակներում 6-րդ չափաբաժնի մասով անհրաժեշտություն է առաջացել ավելացնել ձեռքբերվող ապրանքի քանակը, որը չի գերազանցում Պայմանագրի գնի 10%-ը:

**Փոփոխության նկարագրություն.** «ԵՐԵՎԱՆԻ ԱՎՏՈԲՈՒՍ» ՓԲԸ-ի և «ԷԼԻՍՏԻԼ» ՍՊԸ-ի միջև 2023 թվականի փետրվարի 3-ին կնքված N ԵԱ-ՀՄԱՊՁԲ-22/76-3 Պայմանագրի.

- Հավելված թիվ 1-ով սահմանված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով նախատեսված ապրանքների ձեռքբերման քանակը ավելացվել է պայմանագրի գնի 10%-ով, որը կազմում է 7839000 (յոթ միլիոն ութ հարյուր երեսունինը հազար) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:
- 3.1 կետը շարադրվել է հետևյալ խմբագրությամբ՝ «Սույն պայմանագրով Վաճառողի կողմից մատակարարաված ապրանքի գինը կազմում է 86229000 (ութսունվեց միլիոն երկու հարյուր քսանինը հազար) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն»:
- Հավելված թիվ 1-ով ներկայացված աղյուսակի 7-րդ չափաբաժնի մասով ներկայացված «Ընդհանուր գումար/ՀՀ դրամ» սյունակի «78390000» ՀՀ դրամ գումարը համապատասխանաբար փոփոխվել է «86229000» ՀՀ դրամով:
- Հավելված N 2-ով ներկայացված վճարման ժամանակացույցը խմբագրվել և հաստատվել է համաձայն՝ 2023 թվականի դեկտեմբերի 29-ին կնքված համաձայնագրի Հավելված 1-ի:

**Փոփոխության հիմնավորում.** Պայմանագրի 8.5 կետերով սահմանված պահանջներ:

Պատվիրատու՝ **«ԵՐԵՎԱՆԻ ԱՎՏՈԲՈՒՍ» ՓԲԸ-**